

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱՆՈՍԻ

### ԿԱՐԾԻՔ

**Թագուհի Արմենի Բարսեղյանի «Էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, դրա ոլորտերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ:**

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հիմնախնդիրների բացահայտման համատեքստում՝ շուկայի կարգավորման կատարելագործմանը:

Ազգային էներգետիկական շուկայի մոդելի ընտրությունը բավականին բարդ և փուլային գործընթաց է և ՀՀ էներգետիկ բնագավառի կարգավորման կատարելագործման ուղիների մշակման և արդյունավետ ներդրման անհրաժեշտությունը ժամանակի հրամայականն է դարձել:

ՀՀ էներգետիկայի բնագավառի կարգավորումը ՀՀ տնտեսության առանցքային հիմնարար հարցերից է, հետևապես՝ կարևորվում է էլեկտրաէներգիայի արտադրման, մատակարարման ու բաշխման համակարգերի գործունեության արդյունավետության գնահատումը, և գործող սակագների հիմնավորվածության ուսումնասիրումը:

Կարգավորումը կենսական նշանակություն ունի նաև բնակչության կենսամակարդակի՝ այդ թվում նաև աղքատության հիմնախնդրի լուծման տեսանկյունից, քանի որ ՀՀ տնտեսության ճյուղերի կայուն տնտեսական և համաչափ զարգացման համատեքստում էներգետիկան՝ որպես հասարակության զարգացմանն ուղղված կարևորագույն ոլորտ, կոչված է ապահովելու երկրի առաջընթացն ու տնտեսության զարգացումը:

Էներգետիկ համակարգում առկա են նկատելի մարտահրավերներ՝ կապված բավարար էներգամատակարարման ապահովման և սպառողների համար մատչելի ու կայուն սակագնային քաղաքականության վարման հետ:

Այսպիսով՝ ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերը նշված փաստարկներին գիտականորեն հիմնավորված ուսումնասիրության, վերլուծության և համապատասխան հեռանկարային, արդյունավետ լուծումների առաջադրման անհրաժեշտությամբ:

Վերը նշվածի առումով Թագուհի Արմենի Բարսեղյանի ատենախոսության թեմայի՝ «Էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» ընտրությունը խիստ արդիական է:

### ***Ատենախոսության նպատակը և խնդիրները.***

Ատենախոսության հետազոտության նպատակը՝ Էլեկտրաէներգետիկական շուկայի ուսումնասիրության և առկա հիմնախնդիրների բացահայտման համատեքստում, դրանց կարգավորման կատարելագործման, էլեկտրաէներգետիկ ընկերությունների սակագնային քաղաքականության վերաբերյալ կոնկրետ առաջարկությունների և մոտեցումների մշակումն է:

Առաջադրված նպատակի իրականացման համար լուծվել են հետևյալ խնդիրները.

- Տրվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական և տնտեսագիտական վիճակի իրական նկարագիրը,
- Հատկորոշվել է կարգավորման գործող կարգի կատարելագործման հնարավորությունների շրջանակը՝ հիմք ընդունելով ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի առկա հիմնախնդիրները և առաջարկել հեռանկարային զարգացման լուծումներ,

- էլեկտրաէներգետիկ ընկերությունների սակագնային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից քննարկվել է համակարգի սակագնի կայունացման, հետագա իրականացման հնարավորությունները և ներկայացվել առաջարկություններ սակագնային քաղաքականության կատարելագործման ուղղությամբ,
- բացահայտվել է համակարգում կորուստները նվազագույնի հասցնելու հնարավորությունները,
- մշակվել է էլեկտրաէներգիայի սակագնի որոշման մեթոդաբանության նոր մոտեցումներ՝ հիմնված ծախսերի օպտիմալացման, կորուստների նվազեցման և օպտիմալ շահութաբերության մակարդակի սահմանման վրա,
- գնահատվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի արտադրության, սակագնային մարժայի, էլեկտրաէներգիայի գնման սակագնի և պահանջարկի փոխազդեցությունները, որոնք պայմանավորում են էներգետիկ համակարգի կարգավորման մեխանիզմները,
- գնահատվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգետիկ ընկերությունների օպտիմալ վարքի ազդեցությունը սակագնային մարժայի և էլեկտրաէներգիայի սակագնի վրա, որի համատեքստում մշակվել է էլեկտրաէներգիայի սակագնի որոշման նոր մեթոդաբանություն,
- կանխատեսվել է էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացման հեռանկարները:

## ***Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը***

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

- Առաջադրվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի սակագնի որոշման մեթոդաբանական նոր մոտեցումներ՝ պայմանավորված արդյունավետ սակագնային մարժայի ձևավորմամբ. մասնավորապես, գնահատվել է էլեկտրաէներգիայի սակագնի և սպառման ծավալների վրա մարժայի ազդեցությունը, իսկ մարժայի վրա՝ ծախսային առանձին հոդվածների ազդեցությունը,
- գնահատվել են ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում սակագնային մարժայի և էլեկտրաէներգիայի գնման սակագների փոխազդեցությունները, և բնակչության կողմից էլեկտրաէներգիայի սպառման և ընդհանուր սպառման զգայունությունները՝ գնման միջին սակագնի նկատմամբ,
- գնահատվել է էլեկտրաէներգիա արտադրող կայանների վարքագծի ազդեցությունը սակագնային մարժայի և էլեկտրաէներգիայի սակագնի վրա: Հաշվարկվել է էլեկտրաէներգիայի վերջնական սակագնի վրա մարժայի ազդեցությունը և սակագնի հաշվարկային մեծությունը:

## ***Ատենախոսության հիմնական բովանդակությունը***

Ներածությունն ամօք հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ինչպես նաև՝ եզրակացությունները և առաջարկները:

***Ատենախոսության առաջին՝ «էլեկտրաէներգետիկական շուկաների բնութագրման տեսամեթոդաբանական հիմքերը»*** գլուխը արտացոլում է էլեկտրաէներգետիկական շուկաների բնութագրման և գնահատման հիմնական,

առանցքային տեսական խնդիրները: Ներկայացվել է էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավորման մեթոդաբանության կատարելագործման ուղղությունները: Տրվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկ շուկան կարգավորող օրենսդրության վերլուծություն, և հատկորոշվել հայկական էներգետիկական շուկայի ազատականացման աստիճանը: Վերլուծության արդյունքում ներկայացվել է հեռանկարային բարելավման այն ուղղությունները, որոնք, առավելապես կհանգեցնեն ՀՀ էներգետիկ շուկայի արդյունավետ զարգացմանը:

**Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման արդի հիմնախնդիրներն և սակագնային քաղաքականությունը»** գլխում գնահատվել է էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման ու բաշխման համակարգերի գործունեության արդյունավետությունը, և ուսումնասիրվել գործող սակագների հիմնավորվածությունը: Մասնավորապես, ներկայացվել է՝ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը, գազամատակարարման համակարգի կորուստների հաշվարկը, մայրուղային գազատարերում կորուստները, ՀՀ և ՌԴ կառավարությունների համաձայնագրերը, գազի ջերմատվության վերահաշվարկը, ակտիվների շահութաբերության նորման, «Հայաստան-Վրաստան» օդային գծի կառավարումը, բացահայտվել էլեկտրաէներգիայի կորուստների կրճատման հնարավորությունները, և տրվել առաջարկություններ՝ համակարգի առկա հիմնախնդիրների արդյունավետ լուծման և կայուն զարգացման ուղղությամբ:

**Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի սակագնային արդյունավետ մարժայի ձևավորման ուղիներն և զարգացման հեռանկարները»** գլխում գնահատվել է սակագնային մարժայի ազդեցությունը էլեկտրաէներգիայի սակագնի և սպառման ծավալների վրա: Հետազոտվել են համապատասխան ցուցանիշների կորելացիոն կախվածությունները, գնահատվել է ռեզրեսիոն հավասարում՝ սակագնային մարժայի վրա դեբիտորական պարտքի և կորուստների փոխազդեցությունները պարզաբանելու համար: Հետազոտվել է

արտադրող կայանների օպտիմալ վարքի ազդեցությունը սակագնային մարժայի և էլեկտրաէներգիայի գնման միջին սակագնի վրա: Մշակվել է մեթոդ, որը ներառում է մի քանի քայլերի իրականացման հաջորդականություն: Նախ՝ գնահատվել են Երևանի և Հրազդանի ՋԷԿ-երի կայանների վառելիքային ծախսերի ֆունկցիաները՝ կախված համապատասխան արտադրության ծավալներից, այնուհետև հաշվարկվել են դրանց միջին ամսական օպտիմալ ծավալները վարիացիոն անհավասարումների միջոցով: Գնահատվել են արտադրող կայանների կողմից վաճառվող էլեկտրաէներգիայի միջին սակագնի վրա համապատասխան կայանների կողմից արտադրության համար անհրաժեշտ ընդհանուր ծախսերի ազդեցությունները: Այնուհետև՝ որոշվել է սակագնային մարժայի վրա գնման միջին սակագնի ազդեցությունը: Հաշվարկվել է էլեկտրաէներգիայի վերջնական սակագնի վրա սակագնային մարժայի ազդեցությունը և էլեկտրաէներգիայի վաճառքի հաշվարկային մեծությունը:

### ***Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ***

Ատենախոսական աշխատանքի վերաբերյալ կան որոշ դիտողություններ ու ցանկություններ:

1. *Որպես հետազոտության օբյեկտ հեղինակը նշել է միայն էլեկտրաէներգետիկական բնագավառը և նրանում առկա ընկերություններին:* Ելնելով հետազոտության թեմայից, կարծում ենք, որ որպես հետազոտության օբյեկտ պետք է ներառվեին նաև բնագավառի կարգավորման համար պատասխանատու մարմինները, մասնավորապես ՀՕԿՀ և Էներգետիկայի վարչությունը:

2. *Աշխատանքի 1.2 ենթագլխում (էջ 26-28) և 2.1 ենթագլխում (էջ 54) հեղինակը էներգետիկ շուկայի կարգավորման արդյունավետության բարձրացման առումով կարևորում է շուկայի ազատականացման անհրաժեշտությունը և առաջարկում է մշակել օրենսդրություն, որը կնպաստի ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգի*

*աստիճանական ազատականացմանը: Էներգետիկ շուկայի աստիճանական ազատականացմանն ուղղված միջոցառումներ ՀԾԿՀ և ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից մշակվել են դեռևս 2017թ. որոնք արտացոլվել են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում 2018թ փետրվարին: Այնուհետև 2019թ ևս նոր առաջարկություններ են եղել, որոնք ներառվել են վերոնշյալ Օրենքում և ուժի մեջ կմտնեն 2021թ. փետրվարից: Հարց է առաջանում թե շուկայի ազատականացման կոնկրետ ի՞նչ մեխանիզմներ է առաջարկում հեղինակը և գործող Օրենքում ո՞ր դրույթներն են խանգարում այդ գործընթացի իրականացմանը:*

3. Աշխատանքի 2.1 ենթազվիտում հեղինակի կողմից արվել են որոշակի կոնկրետ առաջարկություններ և եզրահանգում, որոնք սակայն ոչ մի կերպ հիմնավորված չեն: Մասնավորապես հեղինակն առաջարկում է.

➤ *կրճատել «Հրազդան 5» բլոկի պատվիրված հզորությունը 40մվտ չափով, որը կհանգեցնի տարեկան 26մլն ՀՀ դրամի խնայողության (էջ 45),*

➤ *որպես էլեկտրաէներգիայի և գազամատակարարման համակարգերում կորուստների դեմ պայքարի խրախուսիչ միջոցառում այդ կորուստների մինչև 50%-ը, անկախ դրանց տեսակից, փոխհատուցել մատակարարների շահույթի հաշվին (էջ 45 և 48),*

➤ *«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից արձանագրված անխուսափելի տեխնոլոգիական կորուստների 4.64% մեծությունը անըմբռնելի է և ըստ հեղինակի գնահատմամբ դրանք պետք է լինեն ոչ ավել քան տեղափոխվող գազի 1% (էջ 48):*

Հարց է առաջանում, ի՞նչ հաշվարկների միջոցով է հեղինակը պարզել որ «Հրազդան 5» բլոկի պատվիրված հզորությունը կարելի է կրճատել հենց 40մվտ չափով, ինչու՞ պետք է էլեկտրաէներգիայի և գազամատակարարման համակարգերում կորուստները փոխհատուցվեն մատակարարների շահույթից, ինչու՞ հենց կորուստների մինչև 50%-ը, ի՞նչ ֆինանսական հետևանքներ դա կունենա այդ կազմակերպությունների հետագա գործունեության արդյունավետության վրա, որտե՞ղ են հեղինակի այն գնահատումները, որոնք թույլ են տվել նրան եզրակացնել,

որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ անխուսափելի տեխնոլոգիական կորուստների մեծությունը չի գերազանցում 1%-ը:

4. Աշխատանքի 3.1 ենթազլխում հեղինակը գնահատել է «ՀԷՑ» ՓԲԸ սակագնային մարժայի վրա ազդող հիմնական ցուցանիշների ազդեցությունը և բացահայտել մասնավորապես կորուստների ցածր մակարդակի և դեբիտորական պարտքերի մեծության նվազման կարևորությունը: Համաձայնվելով հեղինակի եզրահանգումների հետ և որպեսզի արված գնահատումներն ինքնանպատակ չլինեն, կարծում ենք, ճիշտ կլիներ, որ հեղինակն այնուհետև ուսումնասիրեր համակարգում կորուստների կառուցվածքը և դեբիտորական պարտքերի կուտակման պատճառները և ներկայացներ այս ցուցանիշների բարելավմանն ուղղված միջոցառումներ:

5. Աշխատանքի 3.3՝ ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի պետական կարգավորման բարելավման ուղիները ենթազլխում հեղինակը հիմնականում ներկայացրել է ոլորտի պետական կարգավորման գործող կանոնակարգերը և ՀԾԿՀ հետ միջազգային կազմակերպությունների համագործակցության արդյունքում արդեն իսկ մշակված և ընթացքի մեջ գտնվող ծրագրերը: Ելնելով ենթազլխի վերնագրից, կարծում ենք, որ աշխատանքի այս հատվածում նպատակահարմար կլիներ, որպեսզի հեղինակը ներկայացներ նաև մասնավորապես ՀԾԿՀ, որպես ոլորտի հիմնական կարգավորող և վերահսկող մարմնի, գործունեության արդյունավետության և թափանցիկության բարձրացման, գործող կանոնակարգող նորմերի փոփոխման կամ լրամշակման, Հանձնաժողովի իրական անկախության մեծացմանն ուղղված միջոցառումներ և առաջարկություններ:

Աշխատանքում կան նաև որոշ տեխնիկական բնույթի սխալներ: Մասնավորապես.

✓ Աշխատանքի էջ 17 գծանկար 1.1 ներկայացված է ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքը, չնշելով աղբյուրը:

✓ Աշխատանքի էջ 25-26 հեղինակը ներկայացրել է որոշակի ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանություն, նշելով որ դրանք ներկայացված են Հայաստանում էներգետիկ համակարգի կարգավորման ոլորտում խորհրդատվական

ծառայությունների մատուցման հաշվետվությունում, սակայն Խորհրդատվական մարմնի անվանումը և հաշվետվության աղբյուրը չի նշվում:

✓ Աշխատանքում առկա են հղումներ, որոնք պատշաճ ձևով չեն ներկայացված և դժվարացնում են տեղեկատվության ստուգումը: Մասնավորապես հղումներ 40, 41, 44, 57, 64, 66, 73, 74, 78, 87 և 118-ում ներկայացված է ընդհանուր կայքէջը, առանց բացվածքի:

✓ Աշխատանքում հանդիպում են նախադասություններ, որոնք որպես հեղինակի եզրականգումները նույնությամբ կրկնվում են աշխատանքի տարբեր ենթագլուխներում: Մեր կողմից ենթադրվում է, որ դա հետևանք է հեղինակի կողմից հետազոտության շրջանակներում հրատարակած հոդվածների որոշ հատվածների մեքենայական ներմուծման և համապատասխան լրամշակում չի արվել:

### ***Եզրակացություն***

Ընդհանուր առմամբ, հարկ է եզրահանգել, որ ատենախոսությունն իրենից ներկայացնում է ամբողջական հետազոտական աշխատանք, վերը նշված դիտողությունները բնավ չեն նսեմացնում ներկայացված աշխատանքի արժեքը և կարող են հաշվի առնվել հեղինակի կողմից հետագա ուսումնասիրությունների ժամանակ: Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները, ինչպես նաև ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված, համոզիչ և ընդունելի են:


Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի վեց գիտական հրապարակումներում:

Թագուհի Բարսեղյանի «Էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը

համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝


տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



S.U.Մարտիրոսյան

S.U. Մարտիրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտ քարտուղար՝



Լ.Հ.Դարբինյան

04.12.2020թ.

